ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1,

№ 61/838 «31» 07 2018թ.

«ՅՈՒՆԻԳՐԱՖԻՔՍ» ՍՊԸ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ

ք. Երևան, Արշակունյաց 59

Հարգելի պարոն Գևորգյան

Երևանի քաղաքապետարանի և «ՅՈՒՆԻԳՐԱՖԻՔՍ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 08.01.2018 թվականին կնքված «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/6 ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է թափառող կենդանիների վնասազերծման ծառայությունների մատուցման պարտավորությունը՝ համաձայն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցերի պահանջների:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով, սակայն Ընկերությունը 12.07.2018 թվականին գրությամբ հրաժարվել է 08.01.2018 թվականին կնքված «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/6 ծածկագրով գնման պայմանագրով նախատեսված ծառայությունների հետագա մատուցումից՝ չկատարելով պայմանագրով նախատեսված պարտավորությունները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան.....»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Վերոգրյալով պայմանավորված՝ Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի, մասնակի (Պայմանագրի չկատարված մասի՝ 64899700 (Վաթսունչորս միլիոն ութ հարյուր իննսունինը հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով) հրաժարվում է Ընկերության հետ կնքված ծառայությունների մատուցման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն միակողմանի լուծված և պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ համաձայն պայմանագրի կատարման ապահովման երաշխիքի 2-րդ կետի՝ երաշխիքը կներկայացվի Ընկերությանը սպասարկող բանկ՝ պայմանագրի կատարման ապահովման գումարը գանձելու նպատակով: Գանձման ենթակա գումարը կազմում է 6489970 (Վեց միլիոն չորս հարյուր ութսունինը հազար ինը հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ **Գ. ՉԹՐՅԱՆ**

Կատարող՝ Ա. Համբարձումյան
011 514-375